Արձանագրություն N 3

«ԻԱՊԻ-ՇՀԱՊՁԲ-15/8-16/2» ծածկագրով ՇՀ ընթացակարգի

գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

ք. Երևան «17» հոկտեմբերի 2016թ.

ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Արտաշես Միրզոյան - գլխ. ճարտարագետ

Հանձնաժողովի անդամ՝ Աշոտ Բասկայանց - ճարտարագետ

Հանձնաժողովի անդամ՝ Արթուր Խաչատրյան - ՏՀՑ կառավարիչ

Հանձնաժողովի քարտուղար՝ Հասմիկ Դալլաքյան - գնումներ համակարգող

1. «ԻԱՊԻ-ՇՀԱՊՁԲ-15/8-16/2» ծածկագրով մրցույթի գնային առաջարկների ներկայացման, գնահատման արդյունքների հաստատման /մրցույթի արդյունքների ամփոփման/ մասին.

1.1 Գնային առաջարկներ պարունակող ծրարները բացվել են ՀՀ ԳԱԱ «Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ-ում, ք. Երևան, Պ.Սևակի 1, սենյակ 415 հասցեում 2016թ. հոկտեմբերի 17-ին, ժամը 11:00-ին:

1.2 «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/8» ծածկագրով շրջանակային ընթացակարգի գրանցված մասնակիցներից գնառաջարկի հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը՝

Մասնակցի անվանումը	Գտնվելու վայրը
1. «Իքս-Արթ» ՍՊԸ	Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Սարյան 4-55 հեռ. 010-44-66-77, ՀՎՀՀ01237555 davit@x-art.am

1.2.1 Գնային առաջարկներ չեն ներկայացրել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի մատակարարման նպատակով շրջանակային համաձայնագրեր կնքած մնացած մասնակիցները:

1.3. Տվյալներ ծրարը կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջների համապատասխանության մասին.

1.3.1. «Իքս-Արթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարը կազմված է հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

1.3.2. Անհամապատասխանությունները բացակայում էին:

1.4. Տվյալներ բացված յուրաքանչյուր առաջարկում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին: «ԻԱՊԻ-ՇՀԱՊՁԲ-15/8-16/2» ծածկագրով մրցույթի հրավերով սահմանված կարգով «Իքս-Արթ» ՍՊԸ-ն փակ կնքված ծրարով ներկայացրել է հրավերով սահմանված փաստաթղթերը, որոնք համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին: Բոլոր ներկայացված փաստաթղթերը կազմված են բնօրինակից և հրավերով սահմանված քանակով պատճենից, բնօրինակ փաթեթում ներառված բոլոր փաստաթղթերի էջերը կնքված և ստորագրված են մասնակցի կողմից:

1.5 Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

1.6. Մասնակցի առաջարկած գինը հետևյալն է . /ՀՀդրամ/

Հ/Բ	Անվանումը	«Իքս-Արթ» ՍՊԸ-ի գնային առաջարկը առանց ԱԱՀ-ի	«Իքս-Արթ» ՍՊԸ-ի գնային առաջարկը ԱԱՀ-ով
1	Ժապավենային գրադարան	5.708.054	6.849.664

1.7 Մասնակցի ներկայացրած գնային առաջարկում թվաբանական անճշտություններ չկան:
1.8 «Իքս-Արթ» ՍՊԸ-ի կողմից ԵՏՄ արտադրանք չի ներկայացվել :
1.9 Մրցույթի հանձնաժողովի կողմից քննարկվեց ներկայացված գնային առաջարկը և արդյունքում հանձնաժողովը որոշեց .

ՀՕ-206-Ն

Որոշում -15/8-16/2-3

1. «ԻԱՊԻ-ՇՀԱՊՁԲ-15/8-16/2» ծածկագրով ՇՀ ընթացակարգի 1-ին չափաբաժնով առաջին տեղ զբաղեցնող ճանաչել «Իքս-Արթ» ՍՊԸ-ին:
2. ՀՀ Ֆինանսների նախարարություն հարցում ներկայացնել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:
3. Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև հայտով առաջարկված ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը:
4. Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից համապատասխան եզրակացություն ստանալու օրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամները.

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Արտաշես Միրզոյան

Հանձնաժողովի անդամ՝ _____ Աշոտ Բասկայանց

Հանձնաժողովի անդամ՝ _____ Արթուր Խաչատրյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Հասմիկ Դալլաքյան